

« 24 » հունվար 2017 թ No 102 - Ա

«ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԷՄԻԼ ԳԱՔՐԻԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ  
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ  
ՆԱԽԱՀԱՇԻՎԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ  
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի առաջին մասի իբ), իգ), իդ) կետերը, երկրորդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» 1300-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը,

#### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2017 թվականի՝

- 1) եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն Հավելված 1-ի,
- 2) հաստիքացուցակը՝ համաձայն Հավելված 2-ի,
- 3) վարչակազմակերպական կառուցվածքը՝ համաձայն Հավելված 3-ի:

## 2. Ընկերության տնօրեն՝ Հակոբ Թոփչյանին

1) Ընկերության գործունեությունը կազմակերպել սույն հրամանով հաստատված եկամուտների և ծախսերի նախահաշվին, հաստիքացուցակին և վարչակազմակերպական կառուցվածքին համապատասխան:

2) Ընկերության 2017 թվականի կարիքների համար իրականացվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները իրականացնել նախահաշվով հաստատված ծախսերի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության գնումների մասին օրենսդրությանը համապատասխան՝ նախապատվությունը տալով գնման մրցակցային ձևերին:

3) Նախահաշվային եկամուտների և նախահաշվային ծախսերի գումարների գերակատարումների և/կամ/ թերակատարումների դեպքում առաջարկություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն նախահաշվում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

4) 2017 թվականի պետական պատվերի պայմանագրերը կնքելուց հետո, նախահաշվային և պայմանագրային գումարների տարբերության դեպքում եկամուտների և ծախսերի նախահաշվում սահմանված կարգով կատարել փոփոխություններ:

5) Մինչև 2017 թվականի հուլիսի 25-ը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ներկայացնել տեղեկատվություն 2017 թվականի առաջին կիսամյակում եկամուտների և ծախսերի կատարման և տարեկան կանխատեսումների մասին:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Սամվել Մարգարյանին:

ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ